

Քրիստոնեա այսպես

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱՍԵՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄՄԱՆՈՐ ԵՎ ՄԲ ԾՆՈՒՆԹ

ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

13 ղեկուսների

**Պետական Երմիտաժի սնտեն
Միխայիլ Պիոսովսկուն**

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ պետական Երմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոսովսկուն։
Նորին Սրբությունը, ողջունելով տիար Մ. Պիոսովսկու հերթական այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, իր հայրապետական օրհնությունը բերեց եւ շնորհավորեց վերջինիս՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս ընտրվելու կապակցությամբ։

Անդրադառնալով Մայր Աթոռի թանգարանների եւ Պետական Երմիտաժի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքի խոսք ասաց Երմիտաժի տնօրենին՝ Հայ Եկեղեցու պատմական սրբազան արժեքների վերականգնման եւ պահպանման գործում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ցուցաբերվող աջակցության, մասնագիտական խորհրդատվության եւ Մայր Աթոռի թանգարանների աշխատակիցների վերապատրաստման համար։



Այնուհետեւ Մ. Պիոսովսկին ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ իր հերթին պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտ գորակցությունը ցուցաբերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ ազգային-հոգեւոր արժեքների պահպանման կապակցությամբ գործում։

Չորսյի ընթացքում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը եւ Մ. Պիոսովսկին քննարկեցին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի հաստատման 300-ամյակի առիթով 2017 թվականին Երմիտաժում համատեղ ցուցահանդես կազմակերպելու հարցը։ Ընդամառ ՌԴ պետական Երմիտաժի տնօրենի առաջարկին՝ որոշվեց նաեւ «Երմիտաժի օրեր Հայաստանում» ծրագրի շրջանակներում մի շարք միջոցառումներ եւ վարպետության դասեր անցկացնել Ս. Էջմիածնում։

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը, վերստին ընդգծելով Միխայիլ Պիոսովսկու բարի վաստակը, մարտեց, որ Աստված մշտապես Իր հովանու ներքո պահի ու պահպանի Նրան։ Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արխիպի եւ թանգարանների տնօրեն Անդրիկ քին. Կարապետյանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել ՌԴ նախագահին

Պետական Երմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոսովսկու հերթական այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, իր հայրապետական օրհնությունը բերեց եւ շնորհավորեց վերջինիս՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս ընտրվելու կապակցությամբ։

«Մեր արդթն ենք վերառաջում առ Ամենողորմ Տերը, որպեսզի Իր երկնային լուսնեղծ օթեաններում ընդունի գոհվածների հոգիները եւ մխիթարություն պարգևի Նրանց հարազատներին ու մտերիմներին։ Թո՛ղ Աստված զերծ պահի աշխարհը նման արհավիրքներից», - ասվում է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում։

Սբ Ստեփանոսի տոնին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ սարկավազական ձեռնարկություն



Պետական Երմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոսովսկու հերթական այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, իր հայրապետական օրհնությունը բերեց եւ շնորհավորեց վերջինիս՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս ընտրվելու կապակցությամբ։

Բերկրառատ օրվա կապակցությամբ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ։ Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը։ Պատարագի սրբազան արարողությանը կատարվեց նաեւ սարկավազական ձեռնարկություն։

Նախօրը՝ ղեկուսների 25-ի երեկոյան, հատուկ արարողությամբ Մայր տաճարի Իջման սբ Սեդակի առջեւ տեղի էր ունեցել դպրության, ուրարարության եւ կիսասարկավազության աստիճանների տվչության արարողությունը։

Գետրոյան հոգեւոր ճեմարանի 11 ու Զահանայից պատրաստության Բ լսարանի 5 սան ստացել էր դպրության, ճեմարանի Դ լսարանի 14 սան՝ ուրարարության, եւ Գետրոյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 27 ու Զահանայից պատրաստության Գ լսարանի 4 սան՝ կիսասարկավազության աստիճան։

Սբ Ստեփանոսի տոնի առիթով, օրհնությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մուշեղ սրբազանի ձեռամբ սարկավազական ձեռնարկության արժանացավ 31 սան։

Շարունակությունը՝ էջ 3



Դեկտեմբերի 20-ին Գեորգյան հոգևոր ճնադրանքի հանդիսությունների դահլիճում, բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Քարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Չայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն:

Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու (Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ) շքանշան շնորհվեց 33 ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, 33 ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնի վարիչ Զեմրիկ Գովհաննիսյանին, պատմական գիտությունների դոկտոր, արեւելագետ Նիկոլայ Գովհաննիսյանին, 33 ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանին և 33 վաստակավոր ճարտարապետ, 33 Կառավարության առընթեր Զարգացման ծրագրի արտակարգ կոմիտեի նախագահ, Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի ատենապետ Նարեկ Սարգսյանին:

Արարողությունը բացվեց Մայր Աթոռի դիվանատան ներկայացրած հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քնն. Ավետիսյանի ողջունի խոսքով: Այնուհետև Նիկոլայ Գովհաննիսյանի վաստակին ու գործունեությանն անդրադարձավ 33 ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի վարիչ, պ. գ. թ. Լիլիթ Գովհաննիսյանը, Վահե Շահվերդյանին ներկայացրեց արձակագիր, դրամատուրգ, Գագրինե Սուրբուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի փոխտնօրեն Ելլիլ Շահնազարյանը, Զեմրիկ Գովհաննիսյանի գիտա-

հայության սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր գավակիր և շնորհավորում ծննդյան 70 եւ բնական գործունեության 50-րդ տարեդարձերի ուրախ առիթով:

... Վանձորում ավելի քան երկու տասնամյակի Նվիրյալ ծառայությանը Դուք կոր շունչ բերեցիք Դրամատիկական թատրոնի գործունեությանը եւ բարի ավանդ՝ Հայաստանի հյուսիսային շրջաններում մշակութային կյանքի զարգացմանը:



ված է. «Մեծարգո՛ տիար Գովհաննիսյան, տասնամյակներ շարունակ Դուք գիտական, գրական, ստեղծագործական ու հասարակական բեղմնավոր գործունեությանը ծառայում եք հայրենի մեր երկրին ու հավատավոր ժողովրդին: Ձեր անհուղարկ աշխատանքի արգասիքները՝ բազմաթիվ գրքերն ու թարգմանությունները, հրապարակահոսանքային հոդվածները, հեղինակային հեռուստահաղորդումները նախանձախնդիր ու շնորհաշատ մտավորականի համբավ են բերել արժանավոր հայրորդը:

Բարձր գնահատանքի է արժանի Ձեր

անաղարտության պահպանման եւ հայ մշակութային ժառանգության ճանաչողության հանդեպ Ձեր անվավա նախանձախնդրությունը:

Մենք ուրախ ենք հաստատելու, որ մշտապես ակնատես ենք եղել Ձեր որդիական սիրուն ու Նվիրումին՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Տիար Նարեկ Սարգսյանին ուղղված կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի վարչատեսակական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Այնտեղ ի մասնավորի հավան է. «...Դուք տասնյակ տարիներ հայրենավոր եղով Ձեր կարողություններն ի սպաս եք բերում հայրենի մեր երկրում ճարտարապետության եւ քաղաքաշինության զարգացմանն ու առաջընթացին: Հայաստանի եւ արտերկրի ուսումնական հաստատություններում ամբարձ գիտելիքներով եւ մասնագիտական Ձեր կարողություններով Դուք առավել արդյունավորեցիք Ձեր գործունեությունը մայր հայրենիքում: Ի գնահատություն ճարտարապետության ասպարեզում Ձեր ներդրումի եւ կշանակալի ձեռքբերումների՝ Դուք հայրենի իշխանությունների կողմից կոչվեցիք պատասխանատու պաշտոններ, որոնք շարունակ 33 Կառավարության առընթեր ճարտարապետական խորհրդի նախագահ, Երեւանի գլխավոր ճարտարապետ եւ 33 քաղաքաշինության նախարար: Ձեր ստեղծագործական տաղանդով Դուք հեղինակել եք ճարտարապետական ինքնատիպ նախագծեր՝ իրականացնելով կառուցումը հույակերտ շինությունների, ինչպիսիք են նախագահա-

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում սեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն

կան վաստակին անդրադարձավ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր Միեր Նավոյանը, Նարեկ Սարգսյանին ներկայացրեց Ալեքսանդր Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն, ճարտարապետ Անուշ Տեր-Մինասյանը:

Ապա «Էջ Միածինն ի Զորե» հոգեպարար շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական արքատու կոնդակները եւ շքանշանները:

Նիկոլայ Գովհաննիսյանին ուղղված կոնդակում, որն ընթերցեց Մայր Աթոռի վանդից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, մասնավորապես գրված է. «... Գիտական ու հասարակական բեղուն գործունեությանը Դուք տասնամյակներ շարունակ նպաստ եք բերում մեր երկրում արեւելագիտության եւ հատկապես արաբագիտության զարգացման գործին: Ձեր հայրուկյոր գիտական աշխատությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով՝ Ձեր անունը հայտնի դարձնելով նաեւ Հայաստանից դուրս եւ արժանացնելով Ձեզ գիտական կոչումների ու միջազգային պարգևների:

Տակավին անցյալ դարի կեսերին Ձեր ջանքերով հիմնվեց 33 ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժինը, որն անցած տասնամյակների ընթացքում Ձեր հմուտ ղեկավարությամբ իրականացրեց հետազոտական արդյունավոր գործունեություն՝ լույս ընծայելով բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ՝ Նվիրված եզգիպոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի եւ տարածաշրջանի այլ երկրների նորագույն պատմությանը, կրոնական ու ազգային խնդիրներին, արաբական աշխարհի հետ մեր ժողովրդի փոխադարձ առնչություններին:

Խորհրդային տարիներին, որպես Արաբական երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի ընկերության հայկական բաժանմունքի նախագահ, Դուք նաեւ գովելի վաստակ բերեցիք արաբական երկրների հետ հասարակական ու մշակութային կապերի զարգացմանը:

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը ներկայացրեց տիար Վահե Շահվերդյանին ուղղված կոնդակը, որում մասնավորապես նշված է. «Համայն



Ձեր կարողությունների ու փորձառության բարձր գնահատանքով Ձեզ վստահվեց Երեւանի Գագրինե Սուրբուկյանի անվան մայր թատրոնի տնօրենի եւ գեղարվեստական ղեկավարի պաշտոնը՝ աստվածապարգեւ Ձեր շնորհներն առանձնական շնանդությանը ի սպաս դնելու մեր երկրի մայր թատրոնի առաջնությունը արդյունավորմանը: Մայր թատրոնում Ձեր գործունեության ընթացքում Դուք բեմադրեցիք հայ եւ համաշխարհային դրամատուրգիայի բազմաթիվ հանրահայտ գործեր, որոնք տարիներ շարունակ ընդգրկված եղան թատրոնի խաղացանկում եւ բարձրորեն գնահատվեցին ոլորտի մասնագետների եւ թատերասեր հանրության կողմից:

Գովելի է, որ տասնամյակներ շարունակ նաեւ մանկավարժական բեղուն գործունեություն եք իրականացնում Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում՝ Ձեր սաներին գիտելիքների հետ փոխանցելով նաեւ Ձեր հոգու անկեղծ սերն ու Նվիրումը թատերական արվեստի հանդեպ:

Մայր Աթոռի լուսարարապետ Գովհաննիսյանի անվան ազգային ակադեմիական կոնդակը, որում մասնավորապես նշ-

վաստակը հայ թատերագիտության բնագավառում: Տասնամյակներ շարունակ Դուք հետեւողական նախանձախնդրությամբ ուսումնասիրում եք հայ թատրոնի պատմությունը՝ ներկայացնելով մեր ժողովրդի կյանքում թատրոնի սկզբնավորման ու հետագա զարգացման ընթացքները: Ձեր աշխատությունները գիտելիքի հետ միաժամանակ ընթերցողների փոխանցում են հայ թատրոնի եւ առհասարակ հայ մշակույթի հանդեպ Ձեր հոգու անկեղծ սերն ու Նվիրվածությունը:

Գիտական գործունեությանը զուգընթաց՝ Ձեր գիտելիքներն ու արվեստագետի բարձր ճաշակը սիրով ու պատրաստակամությամբ փոխանցել եք նաեւ հայրուկյոր երիտասարդների՝ մանկավարժական երախտաբանության առաջնությունն իրականացնելով մեր երկրի բարձրագույն կրթական հաստատություններում:

Մեր ժողովուրդը ճանաչում է Ձեզ նաեւ Ձեր հեղինակային հեռուստահաղորդումների միջոցով, որոնք տակավին խորհրդային տարիներից շարունակաբար հեռարձակվել են հայկական եթերից: Ձեր խոսքը մշտապես առանձնացել է իր լեզվական եւ իմաստային խոր հղկվածությամբ՝ լինելով հայրենասիրության ու ազգասիրության պատգամ եւ արտահայտելով հայոց լեզվի

կան նստավայրին կից քառահարկ վարչական մասնաշենքը, Գյուսիսային պողոտան, մայրաքաղաք Երեւանում կառավարական վարչական համալիրը, ուր իրենց կարելու գործունեությունն են իրականացնում մի քանի նախարարություններ: Ձեզ շնորհովս է պատվավոր մրցանակներն ու կոչումները բարի վկայություն են արժանավոր հայրորդը արձանագրած բազում հաջողությունների ու գովաբան ձեռքբերումների:

Արդյունաշատ է նաեւ Ձեր մանկավարժական երկարամյա գործունեությունը: Տարիներ շարունակ Դուք դասավանդել ու վարչական հանձնառություններ եք ստանձնել Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտում՝ կրթօջախի սաներին փոխանցելով Ձեր բազմափորձ գիտելիքները, գովելի ավանդ բերել ճարտարապետների կոր սերնդի պատրաստության երախտաբան գործին:

Հարգարժան պրն Սարգսյան, Մենք առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած Ձեր ծառայություններին:

Իբրեւ Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի ատենապետ՝ Դուք սիրով ու Նվիրումով եւ ամենայն պատրաստակամությամբ Ձեր մասնագիտական կարողությունները ծառայեցնում եք Մայր Աթոռի շինարարական ծրագրերի իրականացմանը՝ ի խնդիր մեր պատմական արքավայրերի ու արդթավայրերի նորոգության, կոր եկեղեցիների ու եկեղեցական շինությունների կառուցման:

Այնուհետեւ Ամենայն Չայոց Կաթողիկոսը մեծարարական շնորհեց Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանները:

Վերջում շնորհաբաշխության առիթով իրենց արտի խոսքն ասացին նաեւ մեծարյալները՝ իրենք ընծայված բարձր պատվի համար շնորհակալություն հայտնելով Ամենայն Չայոց Կաթողիկոսին եւ անդրադառնալով Չայոց Եկեղեցու կարելու առաքելության ազգային կյանքում:

Տեղեկություններով հարստացնելու նպատակով հանդես եկան նաեւ Էջմիածնի հայրուկյաց տան ասները:

Միջոցառումն ավարտվեց Նորին Սրբության Պապականից արթողով:

Մոնթեսորիի ուսումնական հաստատությունները գործում են ամբողջ աշխարհում: Դրանք նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կրթության են, որոնք, սակայն, տարբերվում են այլ մանկապարտեզներից ուսուցման մեթոդներով ու մոտեցումներով՝ առաջ քաշված 20-րդ դարի սկզբին իտալուհի Մարիա Մոնթեսորիի կողմից: Այժմ աշխարհի 110 երկրում գործում է ավելի քան 22000 «Մոնթեսորի» դպրոց: Կերչին տարիներին հայ իրավաբանության մեջ նկատվում է հետաքրքրություն դեպի Մոնթեսորիի կրթափոխարկայական կանոնները: դրանք լիարժեք հասկանալու են գրագետ օգտագործելու համար անհրաժեշտ է ծանոթանալ նրա մանկավարժական տեսությանը: Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու նրա կյանքն ու ապրած դարաշրջանի անմիջական ազդեցությունները գործունեության վրա, ինչպես նաև «Մոնթեսորիի մեթոդներ» հանրահայտ գրքից մեկ հատված՝ թարգմանված անգլերենից:

զբանության վրա, սակայն մեծ էր նրա հետաքրքրությունը դեպի մանկավարժությունն ու կրթական գործը: Նա խորամուխ է լինում տարբեր հետազոտություններում ու փորձարկումներում, որոնց արդյունքում մտավոր խելոքներն էր գարգացման արատներ ունեցող երեխաների կրթության հարցում հասկում է լուրջ որոշումների: 1900 թ. նա նշանակվում է Ուսուցիչների ինստիտուտի փոխտնօրեն: Գործունեության շրջանակներն ընդարձակվում են. գիտականորեն մոտենալով խնդրին՝ նա փորձարկում է ոչ միայն նոր մեթոդներ, այլև օգտագործում է հինը՝ առանձնացնելով դրանցից օգտակարներն ու կենսունակները, որպեսզի համոզվի, թե որն է եղել այս կամ այն մեթոդի կիրառությունից դուրս գալու պատճառը: 28 տարեկանում Մոնթեսորիի արդեն ուներ իր հստակ դիրքորոշումն այն մասին, որ հաշմանդամ երեխաներն աջակցության պակասի պատճառով են հետ մնում կրթությունից: Սակայն նրա հետազոտությունները չէին սահմանափակվում միայն հիվանդ երեխաներով: Իր բժշկական փորձառության ընթացքում նա հատկա-

ման էր երեխաներին՝ միաժամանակ սովորելով նրանցից: Իր գիտական հետազոտությունների ու փորձի արդյունքում նա հասնում է նրան, որ երեխաներն ինքնակամ ձգտում են դեպի դասարանն ու դասընթացը: Իր կիրառած բազում մեթոդներից նա ընտրում էր միայն նրանք, որոնք մեծ հետաքրքրություն էր ունեցնում էին առաջացնում երեխաների շրջանում: Կրթությունը նա հանգեց այն կարծիքին, որ այն երեխաները, որոնք միջակայքն առնակցում էր և կրթու-

ման էր երեխաներին՝ միաժամանակ սովորելով նրանցից: Իր գիտական հետազոտությունների ու փորձի արդյունքում նա հասնում է նրան, որ երեխաներն ինքնակամ ձգտում են դեպի դասարանն ու դասընթացը: Իր կիրառած բազում մեթոդներից նա ընտրում էր միայն նրանք, որոնք մեծ հետաքրքրություն էր ունեցնում էին առաջացնում երեխաների շրջանում: Կրթությունը նա հանգեց այն կարծիքին, որ այն երեխաները, որոնք միջակայքն առնակցում էր և կրթու-

արժանանում նրա առաջարկված «Այակե տուն» դասասենյակում: Այս երկրորդ այցելության ժամանակ նա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ է անցկացնում: 1917 թ. Իսպանիայի կառավարությունն առաջարկում է նրան գիտահետազոտական հաստատություն հիմնել իրենց երկրում: 1919 թ. նա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ է անցկացնում Լոնդոնում: 1922 թ. իտալական կառավարության կողմից նշանակվում է դպրոցների տեսուչ, սակայն ֆաշիստների հետ ունեցած հակասությունների պատճառով՝ նա թողնում է Իտալիան, 1934 թ. լինում է Բարսելոնայում երեխաների այլ քաղաքներում: 1938 թ. կենտրոն է բացում Լիդեռլանդի Լարեն քաղաքում: Մարիա Մոնթեսորիին վիճակված էր իր երազանքներն իրականացնել պատմական դժվարին ժամանակաշրջանում: Այդտեղ պատերազմի ու քաղաքական թոկոսների միջավայրում՝ գրեթե անհնար էր թվում խաղաղ մանկավարժության զբաղվելը: Զգտելով ունենալ իր մշտական հետազոտությունների կենտրոն-դպրոց՝ նա



ՄԱՐԻԱ ՄՈՆԹԵՍՈՐԻ



պես ուշադրություն էր դարձնել, թե ինչպես են երեխաները սովորում, ընկալում աշխարհը: Նա եկավ այն եզրահանգման, որ երեխաներն ընկալում են այն ամենը, ինչ կա նրանց շրջապատում: Մարմնի և մտքի ուսումնասիրություններում խորամուխ լինելու նպատակով՝ 1901 թ. նա Յոնիս համալսարանում սովորում է հոգեբանություն, փիլիսոփայություն և 1904 թ. ստանում դոկտորի կոչում: Սոցիալական անհավասարության նկատմամբ վերաբերմունքի դեմ պայքարն ուղեկցեց նրան ողջ կյանքում: Նրա դիտարկումներում ներգրավվեցին շատ երեխաներ, որոնք արձանագրեցին կրթական մեծ նվաճումներ է հաջողությամբ պակեցին Մարիայի ծրագիրը: Նա եկել էր այն համոզման, որ հիվանդ, թերզարգացած կամ աղքատ երեխաները են մնում կրթությունից, քանի որ նրանք առանձնացվում են տներում: Կրթություն ստանալու ցանկություն

թյան բնագավառում, հնարավորություն են ստանում բնականորեն զարգացման: Այս դպրոցի հաջողությունը տարածվում է ողջ Իտալիայում: 1909 թ. Մոնթեսորիի շուրջ 100 շրջանակներ ուներ: Նրա դասախոսությունները հիմք հանդիսացան առաջին հեղինակային գրքի, որը լույս է տեսել 1909 թ. Յոնիսում, նաև 1912 թ. Միացյալ Նահանգներում բազմամսվել է անգլերեն, ավելի ուշ՝ արդեն 20 լեզվով: 1910 թ. դպրոցը ճանաչված էր ամբողջ աշխարհում: Նրա մեթոդները հաստակ ուշադրության արժանացան հատկապես Յուլիսիանյի Ամերիկայում: Մարիան իր կյանքի հետագա տարիներն ամբողջությամբ նվիրել է երեխաների կրթական գործին, դասավանդել է տարբեր հաստատություններում, գրել հոդվածներ ու մենագրություններ: Նա ուներ հետևորդների հսկայական խումբ, որոնց օգնությամբ Մոնթեսորի կրթությունը տարածվեց ամբողջ աշխարհում: Մարիան առաջին անգամ Միացյալ Նահանգներ է մեկնել 1913 թ., երբ Ալեքսանդր Գրեներ Բելլը կնոջ հետ Վաշինգտոնում հիմնել է «Մոնթեսորի կրթական կազմակերպություն» (Montessori Educational Association): Նրա համալսոնների թվում էին Թոմաս Էդիսոնն ու Յեյնս Զելլերը: 1915 թ. Սան Ֆրանցիսկոյում պանամա-խաղաղօվ կիսաուսյան դպրոցական ցուցահանդեսում մեծ ուշադրության է

հետապնդվում է ևացիզմի կողմից, նրա դպրոցները փակվում են, իսկ գրքերը՝ այրվում: 1939 թ. Նորդու հետ մեկնում է շրջապայության՝ տարբեր վայրերում դասախոսություններ կարդալու: Գառուկ հրապարակվում մեկնում է Յիդիսսատ, դասախոսություններ կարդում Մադրասում, Կարաչիում և այլ քաղաքներում, իսկ որոշ ժամանակ անց դպրոց է բացում Կոդակասայում: Այս դպրոցը գործեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Նա նպատակադրվել էր Յիդիսսատում մնալ 3 ամիս, սակայն Իտալիայի է մեծ Բրիտանիայի միջև սկսված պատերազմական թռկումների պատճառով ստիպված է լինում այստեղ մնալ 7 տարի՝ մինչև պատերազմի ավարտը: Երբ 1940 Յիդիսսատը ներգրավվեց պատերազմում, նրան, իբրև օտարերկրացու, կալանքի տակ են պահում՝ թույլատրելով շարունակել վերապատրաստման դասընթացները: Այս ընթացքում իր յուրաքանչյուր մեթոդներով վերապատրաստում է ավելի քան 1000 հետնիկ ուսուցիչ: «Պատերազմից հետո վերդառնում է Եվրոպա» կյանքի վերջին տարիներն անցկացնելով Ամստերդամում: Նա 3 անգամ առաջադրվում է «Խաղաղության» Նոբելյան մրցանակի՝ 1949, 1950 և 1951 թթ.: Մահացել է 1952 թ. մայիսի 6-ին Յուլիանայում՝ ընկերոջ այգում: Ընթացվելիս Լիլիթ ՅԱՐՈՅԱՆ

Վարդապետական թեզի դաշտոնությունն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Դեկտեմբերի 28-ին, օրինությամբ Ն.Ս.Ս.Ս. Պատրիարք Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Յայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը: Մասնավոր վարդապետական թեզ պաշտպանեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան, Մյանմարի, Սիեզապուրի և Դաքքայի հոգեւոր հովիվ, Ծայրագույն Արեւելքում Նորին Սրբության ներկայացուցիչ Զավեն արքեպ Յազգյանը: Վարդապետական թեզի թեման էր «Չոգեբանական գիտելիքների կարեւորությունը հոգե-



ւոր հովիվ ծառայության մեջ»:

Հանձնաժողովը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստայանը, անդամներն էին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պողոսյանն ու Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարգսյանը:

Չայր Զավենի թեզը ներկայացնելուց հետո գրախոսությամբ ելույթ ունեցավ հոգեբանության

գիտության դոկտոր, պրոֆեսոր Կարմ Կարդապետյանը: Ընկից հանձնախումբը դրական եզրակացություն տվեց վարդապետական թեզի պաշտպանությանը և արժանի համարեց Զավեն արքեպ Յազգյանին ներկայացնելու մասնավոր վարդապետության աստիճանի տվչությունը:

Նույն օրը, Ամենայն Յայոց Յայրապետի հայրապետական բարձր տնօրինությանը ձեռնարկված գեղեցիկ ավանդության համաձայն, ձեռնարկ Մայր Աթոռի լուսարարապետ Յոզման եպս Զակարյանի, Զավեն արքեպ Յազգյանի Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ արժանացավ մասնավոր վարդապետական աստիճանի:

ՇԻՐՎՅԱԼ ՔՎՈՅՎԿՆԵՐԻ ՎՇԽԱՐԸ

Սկզբը՝ թիվ 14-23
 Ի վերջո, ազգ, հայրենիք եւ մայրենի լեզու հասկացությունները, համակշիռվելով ու համարվելով, դառնում են այն անբաժանելի «Միավորյալ Երրորդությունը», որ Մասիսի խորհրդակնիշխվ կազմում է Հովի. Շիրազի բանաստեղծական աշխարհի ողնաշարը: ժողովրդի հանդեպ սիրո բացառիկ զգացողությունն ու որդիական պարտքի գիտակցումն են բանաստեղծի թելադրել գրելու հետեւյալ քայնակը:

*Իմ մայր ազգին թելուզ հնքս
 մոր պես ծնած լինեի,
 Աստվածային ամբողջների
 կաթով սնած լինեի,
 Ե՛ս լինեի թելուզ ծնած
 անմահությունից իմ հայրոջ՝
 Էլի՛ պիտի պարտք մնայի՝
 թելուզ Աստված լինեի:*
 324

Ահա այստեղ է դրսևորված ազգային երկու մեծ բանաստեղծների գրողական խառնվածքների էլ ընդհանրությունը, էլ էական տարբերությունը: Թումանյանն իր քայնակներում երեւում է իրեն բնորոշ հանճարեղ Էպիկական խաղաղությամբ, կրրուստիկ ու ցավերը դիմագրվետուսան անկուսով, Շիրազը նրան է մերձենում դարձյալ իրեն բնորոշ՝ բուռն անձնական-քննադատական միջոցով համազգային ու համամարդկային խորեւ ու զգացմունքներ արտահայտելու հազվագյուտ կարողությամբ: Ասկայն քայնակները երեւան են բերում ոչ պակաս կարեւոր ընդհանրություններ. բնական երեւույթների մարդկայնացման ու դրանց գերազանցական մեկնության մեջ Շիրազը Թումանյանի հետեւորդն է, ժողովրդական ըմբռումների պատկերավորման նրա գեղագիտական համակարգը չափազանց հարգատես է Մեծ Լոռեցուն:


Իր բալլադներում՝ «Փարվա-

նա», «Աղավառ վանքը», «Անբախտ վաճառականները», «Ախթամար», «Շիրո», «Որբը», «Հոպոպ» եւ այլն, Թումանյանը բնական երեւույթներին տվել է անչափ հետաքրքիր ու ինքնատիպ գեղարվեստական մեկնություններ: Հայոց մեծ եղենի իրողության, ահավոր կորուստների, ողբերգական դեպքերի ու «բերանն արևոտ մարդկների» գուտ թուրքական վայրագությունների անմիջական, թարմ ու ցնցող ներգործությունը Թումանյանին ընկնել է անհավատալիության աստիճանի ու նրան գրելել լիարժեք ինքնարտահայտվելու հնարավորությունից:

Թումանյանի «տանջող ցավը» պատել է եւ հաջողորենի՝ Չարեւնից, Շիրազին ու նրանց հաջորդներին: Ահա Հայոց եղենի շիրազյան ընկալումը, որ բնական երեւույթների բանաստեղծական ընկալման ու գեղագիտական մեկնաբանության առումով կարող էր պատշաճել հենց Թումանյանին:

*Այնքան հայոց արյուն գնաց՝
 արյուն մանկանց ու կորիճի,
 Որ քիչ մնաց մանուշակն էլ
 դաշտում փոխվեր ալ կակաչի.
 Մանուշակներն այն օրվանից
 թաքնվում են թիփերի տակ,
 Կարծում են, թե լուսին մահիկն
 էլի թուրն է հայոց դահճի:*
 324

Ինչպես տեսնում ենք, Հայոց մեծ եղենի թեման, որ խորհրդային ժամանակներում գերազանցապես Հովի. Շիրազն էր արժանանում իր բանաստեղծություններում ու պոեմներում, իսկ այդ թեմայով քայնակներն այնքան են, որ կարող էին մի առանձին նկարագրի կազմել «Յոթնական պատմում քայնակներում»՝ «Քայնակներ Հայոց եղենապատմում» խորագրով, ասկայն 1981 թ. անվան, հասկանալի պատճառներով, նա նպատակահար-



մար չի համարել այդ եւ գերադասելով ապակենտրոնացումը՝ դրանք ցրել է մասիսապատումի, հայրենապատումի, խոհապատումի, հայոց լեզվապատումի, անվան լուսնապատումի ենթաբաժիններում:

Համայն հայության՝ ռումանտիկ խառնվածքով բանաստեղծը, որ սեփական ժողովրդի հանդեպ ուներ որդիական պարտքի բարձրագույն գիտակցություն, ինչ-որ ժամանակ դեռեւս պատմական արդարության հաղթանակի երգ հետ կապված՝ հայության ազգային երագանքների իրականացման հույս էր փայայում, ոգևորվում էր ու խանդավառում, հավատում էր ու շատ հավատացնել, թե «*խեղի կզա աշխարհի խորն, այսպես քնած չի մնա*», կզա հատուցման երանքի ժամը, «*մահիկը կհանվի կակաչից*», եւ խաղաղության կյո սեղանը կբացվի «*հայր կայի պես, մեզ կերի ցորենի ծովը՝ վեճերի հարըք քամուն տայլով*» («հաղադություն ամենեցուն»): Ասկայն աշխարհի գերտերություններն իրենց քաղաքական, կուրսատեսական շահերը միշտ եւ գերադասել խղճի ու արդյունավետությանը, ոչ

միայն չէին դատապարտում եղենագործ Թուրքիային մարդկության դեմ գործած ծանրագույն ոճրի՝ Հայոց ցեղասպանության ու մեր պատմական հայրենիքի բռնազավթման համար, այլեւ ոճրագործի անպատեհությունները քաջալերված՝ աշխարհակերտ Նոր պատերազմներով կրկնել են մեծ ոճրի՝ խլելով տանայակ միլիոնավոր մարդկային կյանքեր:

Հայոց ողբերգության հանդեպ քաջ աշխարհի սֆինքսային անտարբերությունը գնալով վաճի խորացնում էր բնականից լավատեսությամբ հաստված, ծիածալի պես աշխարհը գեղեցկացնելու տեսլականով խանդավառ, բարության ու մարդկայնության քարոզիչ բանաստեղծի ներքին պատկերումներն ու հակասությունները. մեծ երագանքների հաջորդում էին ավելի մեծ հուսախաբություններ, որոնց դեմ բանաստեղծը անզոր գալուստը երբեմն նրան հասցնում էր ծաղր-հուսահատության:

*Մերթ անուխոյից խելագարվում,
 կորցնում ես դու քեզ,
 Մերթ գտնում ես, ինչպե՛ս,
 ծովից մարդարիտներ գտես,-*

ահա ազգային մենավության ու տառապանքի դատապարտված բանաստեղծի վերջին տասնամյակների հոգեկան երկվության պատկերը «Ինքներգանք համամարդկային» պոեմում: Ահա ինչու նա հայրության նոր սերունդներից որպես պետական գաղտնիք թաքցվող եղենը բացառապետու էւ համաշխարհայնացելու գործընթացը գրական վաղ տարիքից սկսեց իր տարածանք ստեղծագործություններով, որոնք մատարության հանդեպ առանձնահատուկ աջալուրջ էին խորհրդային գավախը, գրողների միությունը եւ գաղափարական ու հրատարակչական կառույցները դեկավարող պաշտոնական մյուս մարմինները:

«Յոթնականում քայնակների» տարբեր մասերում եւ հատկապես «Քայնակներ հայրենապատումի», «Քայնակներ հայոց լեզվապատումի» ենթաբաժիններում կան հայրության ցավը եւ ազգային ճակատագրից տարբեր կողմերից դիտարկող քայնակներ, որոնց մեջ հայության ու հայրենիքի հանդեպ բանաստեղծի սերն ու ցավը արտահայտված են Շիրազին բնորոշ բացառիկ պատկերներով: Դրանք ոչ թե հորիված են միայն բանաստեղծական երեսակայությամբ, այլ խաբսիված են անարդար դարի եւ աշխարհի իրական դաժանության վրա եւ հակարդված են հայ մարդու եւ բանաստեղծի մարդապիտանքի բնական ազգային երագանքներին:

Երկու համաշխարհային պատերազմներով ու Հոկտեմբերյան հեղափոխությամբ բնորոշվող 20-րդ դարը շահեկան եղավ գերազանցապես տիրապետող ժողովուրդների եւ մինչ այդ քաղաքակրթությունից հեռու գտնված ազգերի եւ ազգությունների համար: Խիստ տուժեցին հատկապես հնագույն քաղաքակրթություն ունեցող փոքր ժողովուրդները եւ ինչպես միշտ՝ առաջին հերթին հայ ժողովուրդը: *Շարունակությունը՝ էջ 7*

ԵՂԵՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆԻ ԾՈՔԻ ԱՐՁԱԿՈՒՄ



Սկզբը՝ թիվ 22-23
 Օշականի կենսագրությունից մեզ հայտնի է, որ նա կորցրել է իր ծննդավայրը, հայրենի գյուղը ու իր արձակուրդ, ահա, կենդանագրել է այն: Որքան մեծ է կորցրածի ցավը, այնքան գործել է հայրենի գյուղի բարեբեր ու սովորույթները, տուներն ու ծեսերը, ավանդաբանությունները պատկերելու Օշականի ձգտումը: Այս հասկանալի թույլ է տալիս չիսմաձայնելու գրականագիտության մեջ ընդունված այն տեսակետի հետ, որ կարողի գրականության ստեղծողները սփյուռքահայ հեղինակներն են. դրա ակունքներում կանգնած է Օշականը:

(Կարողի գրականության սկզբնավորման վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ է անում Ժ. Զալանթյանը. «... Ըստ Եղենյանի՝ կարողի գրականությանը մեզ մոտ սկզբը է դնում Չարենցը՝ «Երկիր Լահիրի» վեպում, բայց դա առաջին հա-

յացքից ընկալելի է, որովհետեւ հայրենի քաղաքի կրթտի կակիճը սրբոված է երգիծանքի եւ գայրույթի խառն շերտով» (Շեյկա Քալանթարյան, *Եղենի անդրադարձի առանձնահատկությունները 1920-1930 թթ. խորհրդային գրականության մեջ, Հայոց եղենապատմումի գրականությունը, Երեւան, 2015, էջ 147*):

Եվ ահա գրողը պատկերում է անցյալի իր գյուղը՝ բարեբեր ու սովորույթներով, գյուղի մարդկանց հոգեբանության բացահայտմամբ, կախարհիչ քննադատներով: Այդ ամենին հակադրում է Նորո՛ խորթը, օտարը: Ցավը մեծ է, կորցրածը՝ անդունալի, հարցերը՝ «ո՛ր մնացին անուր, ո՛ր»՝ անպատասխան:

Եղենը սրբեց-տարավ ամեն թանկ բան՝ աղքատացնելով գյուղացիների այնքան սիրելի տները՝ Համբարձում, Վարդապառը, Ծաղկազարը, կրկնակի կարմիրով ներկելով նրանց շատիկը. «Արցունքով կանգնեց իր գյուղը: Նրան ցավ է պատճառում ոչ միայն մարդկային կորուստները, այլեւ ավերակ աշխարհը՝ ճակատոր այգիներ, ցամաքած արջուրներ, իրգեղված արտեր, պղծված գերեզմաններ: Ու երբ սգում է վայելչությունից, փառքն ու շքեղությունից, «աետաուրը, շատախօս գանգակից» գրկված ելեղեցիների կորուստը, առանձին հատվածներում նրա ողբը, ա-

սես, հիշեցնում է պատմաիր ողբը: «Հայրենի հեքիաթներէս» պատմվածքի համար բնական ընտրելով հորեմացու «Տե՛ր ոսկի տեղայի ի փեսայութեան Արտաշէսի/ Տե՛րայի մարգարիտի ի հարսնութեան Սաթիկան» հայտնի վիպերգի տողը, Օշականն ստեղծում է նոր ժամանակի պատկերը՝ հայրենիքի եւ հայ ժողովրդի հոգեվարքի պատկերը. «Հիմա հարսնիքը չունի անհավաքելի ոսկի խորքը, մարգարիտ լայնքով պայտը, ու հարսները գուրկ են լոյսին ու ճառագայթին երկնատուր անձրեւէ: ... Մեր սերունդը հարսնիքի էրթթար» (*Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգություն, Պերյուք, 1983, էջ 105*) («Չատիկ», «Տերընտաս», «Ճաղկագար»):

Գրողի առանձնահատուկ ոգևորությամբ է կենդանացնում հայ գյուղի տուներն ու ծեսերը, հատկապես դրանց մասնակից «կակաչի պես աղջիկների ու մանուշակ նայուածքով հարսների» գեղեցկությունը: Այդ բնութագրումներում նկատվում է հայկական ընտանիքներում ազգի ու հավատի պահպանման համար կնոջ դերն ու կանանկությունը: Այդ պատկերների հետեւում են իրենց կուսությունը՝ «վրակն ու հարեմն տուած» անոթաար աղջիկները, տարաբախտ կյանք ու մայրերի լացը՝ կորցրածը այլես ետ բերելու անզորությամբ:

«Կայսերական յաղթերգություն» շարքի գրեթե բոլոր գործերում Օշականն առավելապես հանդես է գալիս որպես վաճ-

րագրող: Ասկայն շարքում առանձնանում է մի պատմվածք՝ «Տանտանը», որը կարող ենք համարել եղենն ապրած որբերի կյանքի ընդհանրացված արտահայտություն: Օշականը համաժողովրդական ողբերգության հետեւանքով որբացած մանուկների բեկված ճակատագիրը խտացնում է այս պատմվածքի հերոսի մեջ: Պատմվածքում երեւում է մարդկային հոգին գննող հոգեբան-գրողը, ով որբի ներաշխարհը բացահայտելու հոգեհանդէսներ կանգնում է առաջին հայտնի գյուղացի մանկան հոգեբանությունը, հետաքրքրությունները, վախերն ու ցանկությունները: Այստեղ նկատվում է տեղանքի նկարագրության միջոցով հրաշքով փրկված որբի ներաշխարհը բացահայտելու Օշականի ձգտումը: Մարի Ռոզ Աբուսեֆյանը գրում է. «Օշականն այստեղ խոր ստեղծագործողից դառնում է հոգեբան հետազոտող՝ հաստատելով այսօրվա կյալագիտությունի այն տեսությունը, որ վաղ մանկության մեջ հոգեկան զարհուրելի ցնցումներ ապրածների ներագիտակցության մեջ դաշվում է այդ տեսարանները, որոնց «առատ» պատկերներ են անվանում» (iconic images), եւ որոնք հաճախակի գուրխ են բարձրացնում՝ արթնացնելով իրենց ապրած ցնցումը» (*Մարի Ռոզ Աբուսեֆյան, Հայոց ցեղասպանության արտացոլումը Հակոբ Օշականի գործերում, Պատմա-քաղաքական հանդես, հ. 3, 2013, էջ 38*):

Շարունակությունը՝ էջ 6

ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒԾՄԻՋՆԱԴՐԱԿՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ թիվ 21-23

Տաղերգության ազդեցությունն ավելի զգալի է 16-րդ դարի բանաստեղծ Միևսի ստեղծագործությունների վրա: Չանագան աղբյուրներից այդ հնարանները նրա գրչի տակ հանդես են գալիս նոր համադրություններով և մի առանձին հմայք են հարդրում ոտանավորներին: Օրինակ՝ Միևսի «Տաղ գեղեցիկ ուրախութեան» (տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 187) բանաստեղծության մեջ սիրուհու «ուները կամար են, աչքերը՝ «ծով-ծով»: Այդ գեղեցկության հմայքին չի դիմանում «խե» երգիչը:

*Ուներդ է կամար,
Ես խե ու խումար,
Զու ծով-ծով աչքերուդ համար,
Այլ չեմ դիմանար,
Զու սիրուդ համար,
Բարակ հայելուդ համար:
Նույն տեղում, էջ 408*

Այստեղ, թերևս, տեսնում ենք հայրենիքի և Թևկուրանցու ստեղծագործության հեռավոր արձագանքները:

Միևսը երբեմն զարմանալի ճաշակ է հանդես բերում պատկերավոր խոսքում: Վերոհիշյալ բանաստեղծության մեջ նա կերտում է իր սիրուհու հրաշք կերպարը՝ հասակը համեմատելով «սալվի» ծառի, քայլը՝ կաթավի հետ:

*Երեսդ է պայծառ,
Պոյո է ֆիդան,
Շառ ծոցիդ միջի անճաղ թակկար,
Այլ չեմ դիմանար,
Զու սիրուդ համար,
Բարակ հայելուդ համար:
Նույն տեղում, էջ 411*

Նույն ձևով է սիրուհուն գովաբանում այդ դարաշրջանի մի անհայտ բանաստեղծ «Տաղ սիրոյ առ սիրելիս» ոտանավորի մեջ:

*Առաւտուն կանուխ, կանուխ,
Եարս ի պաղչան քաղեր անուխ,*



*Ինքն սպիտակ, աչկին է թուխ՝
Իմ տուն, խօրտոսիկ, պապու տուն:
Նույն տեղում, էջ 641*

Այստեղ տեսնում ենք թուխմանուկյան ուրուշ արձագանքներ: Արդեն նկատել ենք, որ հայրեններում քնարական հերոսը պատկերվում է թուխ աչքերով, թուխ մազերով, թուխ ուներով կամ անվանվում է Թուխ մանուկ, Թուխ կտրիճ կամ պարզապես Թուխ և առնչվում է նախաքրիստոնեական «Թուխ Մանուկի» պաշտամունքի հետ: Այս առումով ուշադրության է արժանի սիրո մեկ այլ անհայտ երգչի բանաստեղծությունը՝ «Տաղ սիրոյ» վերնագրով, որը տարբերվում է Նույն ժամանակաշրջանի մյուս երգերից: Այս երգի քնարական հերոսն օտար երկրից եկած կտրիճն է, որի հոգին այրվում է սիրով:

*Ղարիպ կտրիճ՝ յօտար յերկր է եկեր է,
Մակար թե՛ զես սիրուն հովք բերեր է,
Եկեր մեկ գալումի Աչքի եղեր է,
Կու հառաչէ սրտես, թե՛ աս ինչ խոճեր:
Նույն տեղում, էջ 346*

Բանաստեղծը կորցրել է բացում է «Ղարիպ կտրիճի» սրտի գաղտնարանը. սիրածի սերն ու կարոտն են նրան հանել քաղաքից:

*Յիս անճալ խեղճ բաներ եղեր է,
Խեղճ այն է, որ լալով քաղքես ելեր է,
Անճալ դարիպ կտրիճ հասրաթ մեներ է,
Յոգիս կու ցալի՝ դարիպ մի ասեր:
Նույն տեղում, էջ 346*

Այս վերջին տողը զարմանք է հարուցում իր հուզականությամբ, այն արտահայտում է երգչի վերաբերմունքը պանդխտության նկատմամբ:

Բանաստեղծը զարմանալի կրթությամբ է պատկերում սիրահար կտրիճի սիրո տաղանայնությունը: Սիրով է բռնկված նրա հոգին: Սիրուհու ամեն մի խոսք խոցում է «ղարիպուկ կտրիճի» սիրտը, աչքերի, ուներով խաղը տարել է նրա խեղճ ու միտքը: Սիրահարի «արյունով» են ներկված լեռները, կրակ է ընկել նրա ներսը և այրում է հոգին: Նա հուսահատ դիմում է սիրած կնոջ:

*Չըր արածն չէ արեր հարամի,
Աչքքին կու խաղա, կասեր հալամի,*

*Կրակն անկեր կերի, մեկ մահալամի,
Բայց ան մեկին հառաչէ անանց ալամի:
Նույն տեղում, էջ 347*

Միակ հանգստությունը, որ բերում են կտրիճի սիրահար սրտին, Թևկուրանցու տաղերն ու հաթայի խաղերն են:

*Մեկ Ղարիպուկ կտրիճ եղեր սավտայի,
Նայ կասեր, թե՛ գիտես, ես ես չավտայի,
Տաղեր Թուկուրանցի, խաղեր հաթայի,
Ատող եր ու գողո նման Յուլբայի:
Նույն տեղում, էջ 346*

Բանաստեղծի ակնարկը հուշում է, որ Թևկուրանցու տաղերը ոչ միայն սիրված են եղել միջնադարում, այլև սիրահարների շուրթերին իբրև աղոթք են հնչել:

Այս ես արանց նման պատկերները 16-17-րդ դարերի սիրո երգերին թարմ շունչ են հաղորդում և ընդհանուր ժողովրդական ոգու հետ միասին ինչ-որ չափով փոխում սիրո բանաստեղծության կերպարանքը: Այս բոլոր գծերն ավելի լավ են երևում Զուսա Երեցի եւ Ղավթի Սալաձորցու ստեղծագործություններում: Զուսա Երեցի սիրային բանաստեղծությունները որոշակի պատկերացում են տալիս ինչպես նրա ասպարեզի, այնպես էլ խառնվածքի մասին. ցույց են տալիս, որ նա հին երգիչների տաղերի երագող սիրահարը չէ, այլ մարդ, որ վստահ է իր տեսչանքի իրականացմանը: Առհասարակ բանաստեղծն այնքան վստահ է իր սիրու ուժին, որ երբ սիրած կինն ակնարկում է, թե ինչքան ամուսնացած է, նա չի վարանում հայտարարել, թե շարունակելու է սերն ու սիրածի գովքը: Երգիչը չի հուսահատվում նույնիսկ այն ժամանակ, երբ կինը հորդորում է, որ հեռանա: Նա գիտի այդ հորդորի արժեքը, գիտի նաև, որ չի կարելի ձեռքից բաց թողնել սիրո ժամանակը:

*Չույնու կենես այրպես դատով,
Չույնու կու անցանես վատով,
Քանի՛ կենաս դուն խորիտատով,
Ուռուկորթինու կու խալարի:
Նույն տեղում, էջ 655*

Շարունակությունը՝ էջ 8

ԵՂԵՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՎՐԵ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔԻ ԱՐՁԱԿՈՒՄ


Սկիզբը՝ էջ 5

Տուն ու հայրենիք կորցրած, եղեռնի ու տեղահանության սարսափներն ապրած որբերը ողջ կյանքն ապրեցին «հիշատակաց երկր» (Շուշանյան) ծանր ու հոգեմաշ հուշերով: «Անոնք կ'ապրին իրենց մեռելները ու կը խաղան այն ընկերներուն հետ, որոնք չորցող ծաղիկներու պես թափեցան երկար ճանապարհին վրայ» (էջ 36): Որբերը խոր դրամա են ապրում՝ հայտնվելով հիսի և նորի հակադրության մեջ՝ անբնական համարելով կորցրածը եւ ձեռք բերածը. ջրառատ ավազանի փոխարեն՝ ցամաքած ավազան, սիրելի տիկնիկի փոխարեն՝ մեքենա ու թեւը կտորած տիկնիկ, կանաչ պարտեզի փոխարեն՝ չորացած ճյուղեր, դայալյուղ թռչունների փոխարեն՝ միայն ագռավներ, շեն տակ փոխարեն՝ ամայի տուն: Վայրենի են երեսույթներ, որոնք նրանց հոգում արթնացնում են հայրենի տան քաղցր հիշատակները, նրանց արյուն մեջ կուտակում տանջող կարոտն ու սեր: Այս սերն ու կարոտը խտանում է «Կանանց կրիակի» պատմվածքի վերջին տողերում, որոնք հիշեցնում են մեր անտունները. «Գագի՛ն մեր լիճեն քակելու ոսկի պայտուրցը կրակ է ձիւր: Գագի՛ն փստռելու մեր օրանները են մեր աղջիկները: Գագի՛ն մեր բլուրներուն դեղնութեանը մեջ համբուրող ծաղիկներուն երևանութեանը» (Յալուր Օշական, *Վայրենական յարդերգություն, Պէրյուզ, 1983, էջ 94*): Ուրբեն հայ մարդը միշտ հիշելու է իր

կորցրածը եւ փայփայելու է քանդված տունը վերաշինելու հույսը: «Ո՛րն է հայ ժողովրդի հարատևության գաղտնիքը» հարցի պատասխանը (զուգահեռը կարելի է տեսնել Լաես Շ. Շահնուրի «Արդար գնդակահարություն...» պատմվածքում) Օշականը գեղարվեստականացրել է «Տանտանը» պատմվածքում՝ գանգերի դրոշմների այլաբանական պատկերներով: Խուճելով 1920-30-ական թթ. խորհրդային գրականության մեջ եղեռնի անդրադարձի առանձնահատկությունների մասին՝ գրականագետ Ժ. Շալախարյանը գրում է. «10-ական, ինչպես նաև 20-30-ական թթ. գրականության մեջ հիմնականում բացակայում է ոճագործի կերպարը: Կա նրա ոճագործության հետքը, բայց ինքը՝ իբրև կերպար, առարկայապես բացակայում է» (Ճեյլյա *Քալալարյան, Աշխատող հոգվածը, էջ 141*): Ստեղծված լինելով նույն ժամանակահատվածում՝ Օշականի եղեռնապատումն այս առումով առանձնանում է (*Խամենասությունը կատարվում է նույն շրջանի սովետահայ գրականության համապատկերում, քակի որ Օշականը, ըստ Եղյան, արեստահայ արձակագիրների շարքում եղեռնի առաջին արձագանքողներից էր*): «Վայրենական յարդերգություն» շարքում առկա է ոճագործի կերպարը (թե՛ն ոչ լիարժեք), իսկ «Հիլեն ու Նորեն», «Կար պագիլ են» շարքերում՝ նրա գործողությունների հետեւանքը:

Եղեռնապատումի հայ գրականության մեջ առաջին անգամ (գուցե եւ միակ) Օշականն է անդրադարձել թուրք կանանց կերպարին՝ ոչ պակաս դաժան ու անտարբեր, ինչպես իրենց ամուսինները: Կանայք կողպատում էին դիակներն այնպիսի ոգեւորությամբ, որ հեռանում էին՝ իրենց մանկամարդ երեխաներին դիակների մեջ թողնելով: «Ու թռչունները շատ ալ չէին վախճար սեւազգեստ կիներեն, որոնք կոկոզած՝ մեռելներուն վրայ, հայ հոյելով կը կողպատեին մորթածները» (էջ 50)՝ ամուսիններից վերցրած կացիներով գլխատելով տակավին կեղտահի մարդկանց: Կանանց սարսափելի վարքը, անսիրտ ու անհոգի Էուլուրը բացառապես համար հեղինակը կարծում է նրանց՝ դիակները կողպատելու համար մի քանի անգամ գնալ եւ վերադառնալով: Նրանց է հակադրում հոգատար հայ մայրերին՝ սրտում ուրիշի երեխայի նկատմամբ անասինական սեր եւ կարեկցանք, որ պայմանավորված է հայ կնոջ հոգեբանական առանձնահատկությամբ:

Օշականը չի ասիմետրիկալում միայն թուրք կանանց եւ տրամադրկանց կերպարակերտմամբ: Այդ ցեղի՝ արյուն ու թալանի ծարավ հոգի բացահայտելու համար կարճ են դիպուկ բնութագրումներով կերտում է նրանց երեխաների՝ վայրենացած գազանացման մասնակցների և նախամարդու գործիքներով գինված թուրք պատանիների կերպարներ, որոնք հայացքում



Նկատելու է իրենց հայրերի ստանափոր կատարությունը:

Մի շարք գործերում առկա են նատուրալիստական նկարագրություններ. «Եղան դիակներ, որոնք ճեղքումս արգանդն աղիքներ՝ դառնան օղակումով մը փայլող ուղեբերուն շրթո՛ւյն տեղեցին ու սողակուն օձերուն նման գետին փռեցին անոնց վերջին թռիչքը» (էջ 51): Սա թվում է՝ հակասում է գեղարվեստի օրենքներին, եւ Օշականը չափազանցել է դրանք, սակայն այդպիսի պատկերների հանդիպում ենք նաև այլ հեղինակների երկերում եւ պարամպան աղբյուրներում:

*Շարունակելի
Մարին ՂԱՉԱՐՅԱՆ*

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԻՆՅՈՒՆԻՏԵՆԵՐԸ



Մենք՝ հայերս, շատ հաճախ ենք խոսում ընտանեկան արժեքների, դրանց դերի ու կարեւորության մասին: Փորձենք վերլուծական ճանապարհով հասկանալ, թե ինչու է հայ ժողովուրդը այդքան մտահոգանալով ընտանիքի գաղափար վրա, եւ ինչու է նա համոզված, որ անխտիր բոլոր մարդիկ պետք է ամուսնանան, ավելին՝ ժամանակներ ունենան: Այս հարցի պատասխանը, ըստ երեւոյթի, հարկ է փնտրել մեր ազգի պատմության մեջ: Ինչպես գիտենք, հայ ժողովուրդը դարեր շարունակ շրջապատված է եղել թշնամաբար տրամադրված հարեաններով, որոնք մշտապես ջանացել են նրան ոչնչացնել ֆիզիկապես կամ էլ ուժացման ենթարկել: Սրա նպատակը, անշուշտ, հայ ժողովրդի ստեղծած բարիքներին եւ պատմական տարածքներին տիրանալն էր: Սեփական գոյությունը պահպանելու նպատակով մենք՝ հայերս, ստիպված ենք եղել ընտանիք կազմել, երեխաներ ունենալ եւ ապրել մեծ գերադասուներով: Այս եղանակով լուծվում էին թե՛ սոցիալական եւ թե՛ ֆիզիկական անվտանգության խնդիրները: Անվտանգ պարզ է դառնում, որ մեր ազգի ներկայացուցիչներից շատերն ամուսնանում էին ոչ այնքան հաճախ սիրո եւ երջանկության, այլ համուսն սոցիալական ու ֆիզիկական պաշտպանվածության: Ավելորդ չենք համարում նշել, որ այս մտածելակերպը մեզ գանձում պահպանվել է մինչ օրս: Հայ ծնողն իր երեխային ամուս-

նացնում է, որպեսզի վերջինս, այսպես ասած, «միայնակ չմնա»: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ մենք ապրում ենք նախնադարյան կամ միջնադարյան վայրէջքի միջավայրում, որտեղ միայնակ մարդը դատապարտված է կործանման: Մեր ժամանակներում սա, անկասկած, չափազանցություն է: Միայնակ մարդը եւս կարող է ապրել եւ, ինչու ոչ, լինել երջանիկ, եթե իհարկեւ նա իր կենսաբանական եւ լեզվային խնդիրներն է Պարզաբանենք, որ այստեղ խոսքն այն մարդկանց մասին է, որոնք ապրում են իրենց նաեղին աշխարհով, որը, ի դեպ, կարող է բավականին հարուստ եւ բովանդակալից լինել: Այս խմբի մարդկանցից են, օրինակ, գիտնականներն ու արվեստագետները: Ինչպէ՛ս, հայ հասարակությունը տակավին անպատրաստ է ընդունելու միայնակ մարդկանց եւ համարում է, որ անխտիր բոլորը պետք է ամուսնանան եւ սերունդ տան: Հայրենիքի պահպանության եւ ազգապահպանության առումով մտքով՝ սա անտարակոյս ճիշտ ներտնցում է, սակայն հարկ է նաեւ հաշվի առնել մարդկանց անհատական առանձնահատկությունները: Բացի ինտրովերտներից՝ կան մարդիկ, ովքեր իրենց եւութայն ծայրահեղ անհատապաշտ են, եսակենտրոն ու գերադասում են ապրել ազատ եւ անկախ կյանքով՝ կենտրոնանալով իրենց հանրային բավարարման վրա: Այստեղ տրամաբանական հարց է առաջանում. մի՞թե նախադրյալ է

լինել ամուսնացած, ունենալ երեխաներ ու միտենալ ժամանակ վայելել կյանքը: Անշուշտ նախադրյալ է: Սակայն կյանքը փաստում է, որ ընտանիքը շատ հաճախ ասանանափակում է անհատի ազատությունը, դեռ ավելին՝ ծանր սոցիալական բեռ է դնում նրա ուսերին: Դիտարկելով մեզ շրջապատող իրականությունը՝ ցավալիորեն կարող ենք փաստել, որ ընտանիքը ոչ միշտ է մարդուն երջանկություն ու բերկրանք պարգեւում: Անենք ավելին՝ երբեմն ընտանիքն անհատին լրջագույն ճգնաժամի մեջ է դնում. ե այստեղ խոսքը սոցիալական է բարոյա-հոգեբանական ճգնաժամերի մասին է, որոնք որոշ մարդկանց պարզապես անաղթափելի են թվում: Ստացվում է այնպես, որ ճամուսնանալը շատ արժեքի շահեկան կիներ նման մարդկանց համար, թան ամուսնանալը: Անհատական միջոցներ ընտանիք կազմելը մարդը պետք է ինքն իրեն հարց տա. մի՞թե ինքը բարոյապես եւ հոգեբանորեն պատրաստ է լինել լավ ամուսնու կամ կին, լավ հայր կամ մայր: Եկեք համաձայնենք, որ շատ մարդիկ բնավ պատրաստ չեն ընտանիք կազմելու՝ ե ոչ միայն բարոյա-հոգեբանական առումով, այլեւ՝ սոցիալ-տնտեսական: Ի դեպ, մի փոքր պարզաբանում՝ կազմված սոցիալ-տնտեսական գործոնի հետ: ավագ սերնդի որոշ ներկայացուցիչներ տեսակետ են հայտնում, ըստ որի՝ սոցիալական գործոնը չպետք է խոչընդոտի հանդիսանալ ընտանիք


կազմելու համար: Նրանք վկայաբերում են իրենց անձնական փորձը՝ ասելով, որ իրենք ոչ այնքան բարկվող սոցիալ-տնտեսական պայմաններում էին հաճախ ամուսնանում, դեռ ավելին՝ ժամանակներ ունենում: Ըստ նրանց՝ ամուր ընտանիք ստեղծելու համար ի վերջո կարեւորը անկեղծ զգացմունքներն են, հավատարմությունը, հոգատարությունը, կյանքի ոգմարությունները համատեղ ջանքերով հաղթահարելու պատրաստակամությունը: Այս ամենի մեջ, ինչ խոսք, կա որոշակի ճշմարտություն: Սակայն ավագ սերունդը հաշվի չի առնում մի եական հանգամանակ. խորհրդային պետությունն ապահովում էր որոշակի սոցիալական երաշխիքներ, կայունություն ու սոցիալական արդարություն: Ծշմարտության առաջ ցնեղանելու համար նշենք, որ խորհրդային Միությունը բնավ էլ իրենական պետություն չէր, ե ոչ բոլոր մարդիկ ու ընտանիքներն էին ապահովվում եւ կենսապահովվում, սակայն սովետական երկրում, չհաշված պատերազմական եւ հետպատերազմական ծանր ժամա-

նակները, չի եղել հացի խնդիր, չի եղել զանգվածային գործազրկության խնդիր, իսկ խորհրդային մարդկանց վարձատրությունը կարծես թե բավարար էր անվաճ սկզբագույն կենցաղային պայմաններ երաշխավորելու համար: Ավելորդ չենք համարում նշել այդ ժամանակների բնականաբան այն ապահովություն, անվճար բուժամաշայության եւ կրթության մասին: Այժմ իրավիճակը տրամազօրոն այլ է. մեր օրերում գրեթե չկա ոչինչ, որ լինի ավճար ու մատչելի՝ հասարակության լայն շերտերի համար: Իսկ եթե հաշվի առնենք զանգվածային գործազրկության խնդիրն է տասնյակ հազարավոր մարդկանց ծայրահեղ չլինելու եկամուտները եւ անվտանգությունը վաղվ օրվա հանդեպ, ապա հասկանալի է դառնում, թե ինչու են մեր օրերի երիտասարդները խուսափում ամուսնությունից: Ստացվում է այնպես, որ ընտանիք կազմելու եւ երեխաներ ունենալը ոչ թե՛ սոսկ անձնական խնդիր է, այլ համագաղային ու համապետական:

Շարունակությունը՝ էջ 8

ՇԻՐԱՅԱԿԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՎՆԵՍԱՐԸ

Սկզբը՝ էջ 5
Ողբերգական ու ցավալի իրություն է, որ 20-րդ դարի առաջին տասնամյակներում հայությունը մեծ մասով ինչպես վեց եւ հարյուրակալվեց, սփռվեց աշխարհով մեկ: Միլիոնավոր գոհեղից հետո էլ նրա բնօրրան պատմական հայրենիքը՝ որը Արեւմտյան Հայաստանը, եւ ռուսական սահմանում գտնված Արեւելյան Հայաստանի գագալի մասը՝ Կարսով ու Արարատով, Արդվիկով, Իգդիրով ու Սուրմալով՝ Բոսնո-Լիտվական, ապա եւ թուրք-բուլղարական 1921 թ. մարտի 16-ի ու հոկտեմբերի 13-ի բարեկամության համաձայնագրով նվիրաբերվեց եղեռնագործ Թուրքիային, իսկ խորհրդայնացված Արեւելահայաստանից էլ պոկեցին Արցախն ու Անդրանիկի ազատագրած Նախիջեւանը՝ պատմական Գողթան գավառը, բռնակցեցին նորահորդը Արդեւեան պետական կազմավորմանը, եւ դեռ անորոշ է Վրաստանին միացված հալաբական Ջավախքի ճակատագիրը: Այս է իրական պատմական այն դարի, որ «գիտական կոմունիզմի» գաղափարախոսության տխուր ասպետները ներկայացնում էին որպես «խմբաբազմից մեկ» գաղութատիրության ճիշտագրված ժողովուրդների, ազգերի եւ ազգությունների զարգացման ու ծաղկման դարաշրջան: Մինչդեռ համայն հայության բանաստեղծի համար, սակայն, այլ էր այդ դարի պատկերը:



Եղեռնահար կիսվեց ազգս, դարն սկզբից հրեշվեց, Մեծ Ավետոյացն է դեռ բանտված, - բյուր մահվան մեջ այք բացի: 323

Գերված ու բռնազավթված հայրենիքի ու միլիոնավոր անմեղ նահատակների, որոնք խորհրդախիշն էր գերված Մասիքը, ե սփյուռքված, աշխարհից ծուղկովորի բանաստեղծն այլ կերպ չէր կարող գրել. կեղծիքի դեպքում չէր արժանանա համաժողովրդական անկեղծ սիրո, որ երբեք էին գրչակից մյուս բանաստեղծները:

Շիրազը գրում էր այն, ինչ մտածում էր ժողովուրդը եւ ժողովուրդն իր կորստյան ցավն ու երազանքն ըմբռնում, ընկալում էր այնպես, ինչպես գրում էր Շիրազը: Իսկ ժողովուրդը, հակառակ խորհրդային պարտադրանքների, արդարություն էր երազում,

վշտի ամոցում եւ կորուստների վերադարձ էր տեսնում ու պահանջում: այն, ինչ խորհրդային պետության կազմում ընդգրկված խորհրդային Հայաստանի կառավարությունը պիտի պահանջեր, Շիրազն էր բարձրաձայն պահանջում:

Արդարությունն, ավա՛ր, թե կաս՝ ո՛ր էր հողերն իմ Սասնա: Ինչո՞ւ մի բուռ վանդակում են անզավ ծովերն իմ Վանա, Ո՛ր է արժիվ Վասպուրական, հույսն ինչո՞ւ են վանդակել, Ցավերս ո՛վ է վանդակելու, ո՛ր էր հողերն իմ Սասնա: 323

(Բանաստեղծը միեւնույն քառյակի մեջ երկու անգամ հովեր բառը չէր հանգավորի ծովերի հետ. սա կամ վրիպում է, կամ նպատակային: Առաջին տողինը, կարծում ենք, պետք է լինել հողեր: Ըստ երեւոյթի՝ հրատա-

րակիչները հողերի պահանջը «նվագեցնելու», մեղմելու, գլավիլի ուշադրությունը շեղելու համար դիմել են այս «նխարագիտությանը»: «Լուսավորչի ինչպիսի կանթեղն ի՛նչ շողեր է կորցրել» քայտակը, օրինակ, անխաթար է սպվել, ե այնտեղ ավելի քան հստակ է. «գույգ Հայաստանները» միավորելու, հայոց կորուստները վերականգնելու շիրազյան հողային պահանջը:

Լուսավորչի հույսի կանթեղն ի՛նչ շողեր է կորցրել, 2ույգ Հայաստանն իրար կապող ի՛նչ օղեր է կորցրել. Դեռ չգիտես, մանուկ ի՛մ ազգ, ի՛նչ դրախտ էր հողը ծով, Ի՛նչ Վան ու Սուշ, Կարս ու Կարին, ի՛նչ հողեր են կորցրել: 325):

Եղեռնագրված ու սփյուռքված, հայրենագրված հայության ճանապարհորդ, համընդհանուր լինելով, Շիրազի խոր անձնական վիշտն էր, որի ծանրությունը հագրվ էր դիմանում: Դյուրին չէր լինել ծանրագույն վշտեր ու կորուստներ ճաշակած ժողովրդի իղծելի արտահայտիչը: «Հայոց դանթեականը» պոեմնի բանածեւերից մեկը՝ «Ով հայոց վշտով ինձ պես է տարվում» Իմաստանում է, կամ խելագարվում», բանաստեղծի համար եղել է սեւեռու գաղափար, որն այլաձեւ տարբերակներով արտահայտվել է նաեւ թե՛ բանաստեղծություններում, թե՛ քառյակներում: Հայոց վշտի ծանրության բազմաթիվ բանածեւումներից ու մանավաղ Թումանյանի հանրահայտ «անհուն ու խավոր» ծովի

եւ նրա մեջ տառապելով լող տկող բանաստեղծի հոգու փոխաբերական համեմատությունից հետո, թվում է, անկարելի պիտի լիներ Արեւ խոսք աւսելը: Բայց ահա Հովի. Շիրազն ստեղծել է զուտ իրեն բնորոշ մի պատկեր-քառյակ, որն ավելի զգալի է դարձնում վշտի խորությունն ու ծանրությունը:

Հայոց իղծերն ինձ խելագար, թե՛ դաստուն դարձրին, Յրված անբուն երամներին ինձ արժակաբուն դարձրին, Ո՛րք դիմանամ Մասիսների, հայոց վշտի ծանրության, Արարա՞ծ՝ հայոց տանիք՝ ինձ տակը սյուն դարձրին: 315

Բնական ու տրամաբանական կլինի քննել նաեւ բանաստեղծի հայ ժողովուրդի հարաբերությունը, ե այս առթիվ տեղին կլինի դիմել իրեն՝ հեղինակին՝ պարզելու համար, թե հայոց վիշտն ինչպես եւ կազմավորվել էր ժողովուրդն ու իր բանաստեղծը. գուցե բանաստեղծը մտածում, զգում ու տառապում է ժողովրդի՝ փոխարեն, կամ ժողովուրդը հենց նրան՝ իր ընտրյալին՝ եւ վրասահել իր դառը վշտերն ու կարճակալ երազանքներն արտահայտելու պարտականությունը:

Հայ ժողովուրդ, դու քնած ես, ես արթուն եմ այս գիշեր, երեւնամեծ քո վշտերով ես անբուն եմ այս գիշեր, Ա՛յս, այս գիշեր, թե՛ հավիտյան ես արթուն եմ, դու՛ քնած, Եթե էլ քննել ու դատելով՝ իմաստուն եմ այս գիշեր: 321

Ո՛հ, հրեշ էր, ի՛նչ հրեշտակ, դարը, երբ ես այք բացի, Թե խնդրացի մի կես այքով, հազարն ու մի այք լացի,

Շարունակելի Սամվել ՄՈՐՈՒԴՅԱՆ Բանասիրական գիտ. ողկորդ, պրոֆեսոր

ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՇՄԻՋՆԱԿՐԱԾԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Քնաս Երեցի բանաստեղծությունների մեջ սիրո վայելքի հոգեբանական կողմն է հուզում հեղինակին, ինչը նկատելի է հայրեններում: Բանաստեղծը համեմատությունների ու պատկերների կուրսն առնում է հայրենի լեռնաշխարհից: Սառնորակ աղբյուրները, ծաղիկները, տարվա եղանակները, աստղերը... ամեն ինչ հարմար են նրա համեմատությունների համար:

Մանուշակ բուսեր է հովտին, Հոտն անոշ խորտ-խորտին, Պայծառ աստղ ես առաւօտին, Որժամ ելեր մօրեղ անոշ:

Սիրող հովերն մաղելով, Ֆարքի շաղերն քաղելով, Պաղ աղպուր ես ծիծաղելով, Որժամ կու կեր սաղն անոշ: Նույն տեղում, էջ 657

Քնաս Երեցի սիրային երգերին իրենց բնույթով ման են դավիթ Սալամորցու «Խաղ գուգային այսպե՛ս է» (տե՛ս նույն տեղում, էջ 389) և «Տաղ ի վերայ գուգային» (տե՛ս նույն տեղում, էջ 388) բանաստեղծությունները: Սալամորցին ես ունի իր սիրո պատմությունը, ինչը մեզ տեղեկություններ է տա-

լիս նրա սիրուհու ե իր սիրո թաքուն հրապույրների մասին: Հիշյալ բանաստեղծություններում երգիչը կարծես սրտաբաց զրուցում է սիրուհու հետ, նրան է պատմում իր սիրո պատճառն ու բարեկամություններն ու վշտերը, կարոտն ու երազանքը: Ոչ թե ուրիշների մոտ է գովաբանում նրան, այլ հենց իրեն է ասում, թե որքան խելացի է ու գեղեցիկ: Այս մտերմիկ տոնը բնորոշ է առհասարակ ժողովրդական ստեղծագործություններին: Սալամորցին կարողանում է հմուտությամբ օգտվել հայրենի բանաստեղծական հնարաններից: Նա պատկերում է իր սիրուհու արտաքինը. «ունեիր» համեմատում է աղեղի կամ կամարի հետ, հասակը՝ «սալվի» ծառի հետ: Հիշյալ սիրո երգերում հանդիպում ենք մութազատու սուրբ Կարապետին, որից սիրուհու սիրոը նվաճելու կամք է հայցում բանաստեղծը:

Աչի փետայ եղա դարդ մը, Ազգույն այսօր տեսայ, եղայ դիւանայ, Սուրբ Կարապետ, դու ինձի երատում արա, Ուղիղ սրտով կանչե՛ ի նա, յիմանայ: Նույն տեղում, էջ 389

Հայրենների հետ ավելի շատ առնչություններ ունի 16-րդ դարի բանաստեղծ

Ղարիբ Սկրտիչը: Նրա «Տաղ Սկրտչի ասացեալ անուշ» երգը թե՛ բնույթով, թե՛ հնարաններով շատ նման է քույրական սիրո հայրեններին: Բանաստեղծը զարգացնում է դեռևս հայրեններում գոյություն ունեցող ազատ սիրո գաղափարը:

Մերն սիրով պիտի, չպիտի ծորով, Ե՛նչ ասեն, ինձ լսե՛, կարմիր ու ճերմակ. Ես լալով շուրջ կուգամ, դու ծիծաղելով, Ե՛նչ ասեն, ինձ լսե՛, կարմիր ու ճերմակ: Նույն տեղում, էջ 302

Ղարիբ Սկրտչի սիրուհին դաժան է իր սիրախաղերով, նրա «տրտես» երգիչը գիշերները մտում է անքուն եւ տանջվում է անորոշությունից:

Երնեկ իմ աչերու, որ գեղե տեսայ, Ծառա լինիմ քեզի, մուրտախի հասայ, Երբ կու սիրես սրտով, կայ գրդուստն ասա... Նույն տեղում, էջ 305

Բանաստեղծն այրված սրտով գովերգում է իր «Եարի» արտասովոր գեղեցկությունը, նրա երեքը կարմիր է «զետ կալուն արին», «աչվին թուխ է, ընթվին կամար, երեսից լույս է կալում» «զետ զարեփին», իսկ նրա քայլը «տատում է սիրահարի խելքը»:

Բանաստեղծության մեջ տեղեկություններ կան «շեքեր փոկներով» կնոջ անձի մասին:

Ղարիպուկ եմ, եկեր ես ի ձեր գեղին, Երեսս կու շիտե ոտիցդ հողին, Հիւանդ եմ քո սիրով, դարձեր եմ դեղին. Ե՛նչ ասեն, ինձ լսե՛, կարմիր ու ճերմակ, Ես լալով շուրջ կու գամ, դու ծիծաղելով: Նույն տեղում, էջ 305

Շարունակելի
Վարդան ԵՐԱՆՉԱՅԱՆ
Բանասիրական գիտ թեկնածու, դոցենտ

Սկիզբը՝ էջ 6
Քնաս Երեցի բանաստեղծություններում կենդանի էակ է նաեւ քնարական հերոսուհին: Նա հանդիմանում է «խենթ» սիրահարին, որ նա հեռանա իրենից:

Եղ գլե մանկտիք հարիր հազար, Մեկ մի չի կայ հետ ինձ պազար, Գնա, արա այլոց նազար, Ինձնե վա՛զ արի, վա՛զ արի: Նույն տեղում, էջ 661

Բայց երգիչը հիշեցնում է, որ սիրածն է իր սիրախաղով գրավել իրեն:

Էկար անցար ու եար երիր, Ձեռքդ երեսիտ պատ երիր, Դուս սիրեցիր, դուս եար երիր... Նույն տեղում, էջ 662

Այս բոլորը, ինչպես նաեւ սիրած կնոջ հոգեկան ու մարմնական բարեմասնությունների նկարագրությունը, ստեղծում են բանաստեղծի պարծն ու զգացած սիրո իրական պատմությունը:

Քնաս Երեցի ստեղծագործությունները համեմատելով տաղերգության հետ՝ բանաստեղծը համեմատելով է «Տաղերգուները գեղեցիկ կնոջ համարում էին աստծո ամենակատարյալ ստեղծագործությունը: Սակայն նրանց տաղերում այդ գաղափարն արտահայտվում էր ավելի երկուրածորեն, վերացական ու ընդհանուր ձևով, մինչդեռ Քնաս Երեցի զգացումն ստացել է պարզ և առարկայական արտահայտություն» (Յ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 190):

Ամենք նաեւ, որ Քնաս Երեցի երգեր չի զգում ոչ սիրելու ե ոչ էլ սիրո երգեր հորինելու համար: Նա պաշտպանում է սիրո իրականը, սերն աստվածատուր է ոչ միայն մարդկանց, այլև բոլոր արարածների համար:

Արի, տե՛ս գիրն ի՛նչ է կրաց՝ Մաքուր սիրո տուղն ասուռած, Ինձ ու քեզ միայն չէ տուաց, Տուեր՝ ամեն մարմնայոր: Նույն միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 654

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԿՐԻՍՏՈՍՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ էջ 7
Մինչև պետությունը սոցիալական չխրախուսի երիտասարդներին ե չներշնչի վատահույություն վաղվա օրվա հանդեպ, իրավիճակը Հայաստանում մնալու է այնպիսին, ինչպիսին որ այն կա այժմ: Եվ հետո չեն այն ժամանակները, երբ մեր երկիրն ունենալու է լրջագույն դեմոգրաֆիական խնդիրներ, հետևաբար իրական վտանգի տակ կորսի մեր պետության պաշտպանության հարցը: Ուստի, մեր պետական վերնախավը պետք է օր առաջ յթեպիվ է իրական ելք գտնի ստեղծված իրավիճակից: Լշեքը, որ եղել իրականում շատ պարզ է. Ապահովել բոլոր երիտասարդներին զբաղվածությամբ ե երաշխավորել արժանավայել վարձատրություն, որով հնարավոր կլինի հոգալ ընտանիքի պահանջները: Հարկ է նաեւ լուծել ընկերային ապահովման ե մատչելի ու որակյալ բուժառնայության խնդիրները: Անկասկած այս ուղղություններով մեր պետությունը որոշակի քայլեր ձեռնարկում է, սակայն դժվար չէ նկատել, որ որքան բավարար չեն՝ առկա իրավիճակը շեշտակիորեն փոխելու համար: Ամենասարսափելին թերեւս այն է, որ երիտասարդները կորցրել են իրենց հույսն ու հավատը մեր պետության հանդեպ, իսկ այդ երկուսը վերականգնելը ընկավ ոչ ուրիշին գործ չէ: Սակայն սա չի նշանակում, թե հավատի վերականգնումն ընդհանրապես անհնարին է: Իհարկե՛ ո՛չ: Պարզապես դրա համար համաժ ու հետեւողական ջանքեր են անհրաժեշտ: Ինչպե՛ս, ներկա պահին այդ ջանքերն այնքան էլ տեսանելի չեն: Դու-

մու, ե տրանսլու իրապես առկա է որոշակի ճշմարտություն: Ամեն մի ընտանիքի հիմքում պետք է ընկած լինի հանդուրժողականությունը, դիմացինի որոշ թերությունների հետ համակերպվելու ունակությունը: Ի վերջո, ոչ ոք կատարյալ չէ, ե եթե գուցեղ չկա որոշան հանդուրժելի միմյանց ե հապտվել որոշ արտաքին հետ, ապա ոչ մի ընտանիք չի կարող կազմավորվել, իսկ եղածներն էլ պետք է քայքայվեն: Ասվածից հետևություն: յուրաքանչյուր ընտանիքի հիմքում պետք ընկած լինեն ոչ միայն սերն ու հարգանքը, այլև հանդուրժողականությունն ու ներողամտությունը, որոնք հաճախ երբ օրերում բացակայում են: Այս առումով՝ արդի ժամանակների ընտանիքներն զգալիորեն տարբերվում են խորհրդային ու առաջվել են՝ նախախորհրդային շրջանների ընտանիքներից:

Վերջում հավելեք, որ գոյություն ունեն ընտանիքի տարբեր մոդելներ՝ ըստ դարաշրջանների ե ըստ ռեգիոնների (արեւմտյան, արեւելյան ե հարավային), որոնք ունեն իրենց յուրահատկությունները: Հաստատապես ասել, թե որ ընտանեկան մոդելն է ավելի ճիշտ ե որը՝ սխալ, գործնականում շատ բարդ է: Ամեն մոդել մեկ կարող է լինել թե՛ որակյալ ե թե՛ բացասական կողմեր: Օրինակ՝ արեւելյան ե հարավային ընտանիքների մոդելներն արեւմտյան ազգերին կարող են չափազանց հետադեմ ե նույնիսկ վայրի թվալ, իսկ արեւմտյանը արեւելյան ու հարավային ժողովուրդների կողմից կարող է ընկալվել ու գնահատվել որպես կատարյալ ամենաթողություն ե սանձաբանություն: Այնպես որ, ընտանեկան մոդելների գնահատումը չափազանց սուբյեկտիվ գործ է, ե ամեն մի հասուն անհատ, անկախ իր էթնիկ պատկանելությունից ե

նույնիսկ կրոնից, իրավունք ունի ընտրելու ու առաջնորդվելու իր ցանկացած ընտանեկան մոդելով: Հայերի մեջ, հավանաբար, կցունվեն մարդիկ, ովքեր կխախտրեն արեւմտյան առավել առաջնությունները, ե այստեղ որեւէ պարսպակի բան չկա: Ամեն ավելին՝ կան որոշ եվրոպացիներ, ովքեր նախնուներում են արեւելյան ընտանեկան մոդելը: Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի իր անձնական կյանքն արդե այնպես, ինչպես իրեն տեսնում: յուրաքանչյուր ընտանիքի հիմքում պետք ընկած լինեն ոչ միայն սերն ու հարգանքը, այլև հանդուրժողականությունն ու ներողամտությունը, որոնք հաճախ երբ օրերում բացակայում են: Այս առումով՝ արդի ժամանակների ընտանիքներն զգալիորեն տարբերվում են խորհրդային ու առաջվել են՝ նախախորհրդային շրջանների ընտանիքներից:

Վերջում հավելեք, որ գոյություն ունեն ընտանիքի տարբեր մոդելներ՝ ըստ դարաշրջանների ե ըստ ռեգիոնների (արեւմտյան, արեւելյան ե հարավային), որոնք ունեն իրենց յուրահատկությունները: Հաստատապես ասել, թե որ ընտանեկան մոդելն է ավելի ճիշտ ե որը՝ սխալ, գործնականում շատ բարդ է: Ամեն մոդել մեկ կարող է լինել թե՛ որակյալ ե թե՛ բացասական կողմեր: Օրինակ՝ արեւելյան ե հարավային ընտանիքների մոդելներն արեւմտյան ազգերին կարող են չափազանց հետադեմ ե նույնիսկ վայրի թվալ, իսկ արեւմտյանը արեւելյան ու հարավային ժողովուրդների կողմից կարող է ընկալվել ու գնահատվել որպես կատարյալ ամենաթողություն ե սանձաբանություն: Այնպես որ, ընտանեկան մոդելների գնահատումը չափազանց սուբյեկտիվ գործ է, ե ամեն մի հասուն անհատ, անկախ իր էթնիկ պատկանելությունից ե

Տարունակելի
Վարդան ԵՐԱՆՉԱՅԱՆ
Բանասիրական գիտ թեկնածու, դոցենտ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստուխյան Արմավրյան

Գրասենյակ վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghigkistam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 9.1.2017թ.

Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ